

## Մրցույթի հայտարարություն

### «ՀՀ Գեղարքունիքի մարզի Ջովաբեր գյուղի Ե. Չարենցի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար

Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության, տնօրենի նշանակման և բողոքարկման կարգը հաստատելու մասին» N 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 10-րդ կետի համաձայն հայտարարվում է մրցույթ՝

### « ՀՀ Գեղարքունիքի մարզի Ջովաբեր գյուղի Ե. Չարենցի անվան միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

- 1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը.
- 2) հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր).
- 3) «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 21-րդ և 22-րդ մասերով

սահմանված հիմքերի բացակայությունը:

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

- 1) դիմում՝ լիազոր մարմնի ղեկավարի անունով (ձև N 2):.
- 2) անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.
- 3) հաստատության ղեկավարման իրավունքի՝ հավաստագրի պատճենը.
- 4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը՝ թղթային և էլեկտրոնային

տարբերակներով.

5) ինքնակենսագրություն (ձև N 3):

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ, իսկ էլեկտրոնային եղանակով փաստաթղթերը ներկայացնելու դեպքում՝ բնօրինակները ներկայացնել մրցույթի օրը:

Փաստաթղթերն ընդունվում են ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունում (ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7 հեռ. 060-65-06-25, 098-44-40-98,) 2024 թվականի հոկտեմբերի 16-ից մինչև նոյեմբերի 5-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9<sup>00</sup>-ից մինչև ժամը 17<sup>00</sup>-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

«էլեկտրոնային դիմումներն ուղարկել [gegharkunik@mta.gov.am](mailto:gegharkunik@mta.gov.am) էլեկտրոնային փոստի հասցեին»: